# Սիրելի՛ ընկերներ

Այս տարի Ծաղկազարդը տոնում ենք մարտի վերջին կիրակի օրը: Դա այն օրն է, երբ Քրիստոսը, ավանակի վրա նստած, մտավ Երուսաղեմ: Մարդիկ թափահարում էին արմավենու ճյուղերը և բացականչում՝ «Ովսա՜ննա»: Մի քանի օր անց Հիսուսը տառապեց և մահացավ մեզ համար: Այնուհետև Նա հարություն առավ: Մենք հուսով ենք, որ դուք կվայելեք այս հատուկ ժամանակը՝ հիշելով, թե Երկնային Հայրն ու Հիսուս Քրիստոսը ինչ են արել մեզ համար (տես Հովհաննես 3.16): Նրանց շնորհիվ մենք բոլորս կրկին կապրենք:

Սիրով՝

*Ընկեր* ամսագիր

Հ.Գ. Հիսուս Քրիստոսի մասին քանի՞ էջ կարող եք գտնել այս համարում:






## ՄԵՆՔ ՈՐՏԵՂ ԵՆՔ ԿԱՐԴՈՒՄ *ԸՆԿԵՐ* ԱՄՍԱԳԻՐԸ

Մենք սիրու՛մ ենք կարդալ Ընկեր ամսագիրը: Այն օգնում է մեզ ավելի քիչ միայնակ զգալ, քանի որ մենք Եկեղեցու միակ անդամներն ենք մեր քաղաքում: Մենք կարդում ենք ամսագիրը գերմաներեն և հոլանդերեն, քանի որ մեր մայրիկը Նիդեռլանդներից է, իսկ մեր հայրիկը՝ Գերմանիայից:

**Լարս և Թորբեն Ս. 5 և 3 տարեկան, Ստորին Սաքսոնիա, Գերմանիա**



## ՄԵՆՔ ՍԻՐՈՒՄ ԵՆՔ ՏԵՍՆԵԼ ՏԱՃԱՐԸ

Մենք ապրում ենք Բարանկիլա տաճարի (Կոլումբիա) մոտ և երկու շաբաթը մեկ անգամ այցելում ենք տաճար: Այն օգնում է մեզ հիշել ուխտերը, որոնք մենք կկապենք Երկնային Հոր հետ:

**Պուերտո Կոլումբիա (Կոլումբիա) ճյուղի Երեխաների միություն**



## ԿԱՌՈՒՑԵՔ ՁԵՐ ՍԵՓԱԿԱՆԸ

Ես իմացա, թե Նեփին ինչպես է նավ կառուցել (փետրվար 2020), ուստի ես ինքս նույնպես ցանկացա մի նավ կառուցել, որպեսզի հասկանամ, թե Նեփին ինչ է զգացել: Սկզբում դժվար էր, բայց ես սովորեցի չհանձնվել և վստահել Տիրոջը՝ ինչպես Նեփին վարվեց:

**Յան Դ., 9 տարեկան, Վենեսուելա (Մեքսիկա)**